Ս․ Աստուածածնի՝ եւ յառնել անդ յայտնապէս առաջի ամենեցուն հրաժարեցաւ 'ի կոչմանէն յայնմանէ ։ Խնդրեալ էին երբեմն և ժողովուրդք Կարնոյ զԳրիգոր՝ Առաջնորդ քաղաքին իւրեանց՝ այլ չէր հնար լինել այնմ ։

Ապա առաջի եդին հրաւիրակքն Էջմիածնի զայլ գիր․ եթէ չառնուցու յանձն Գրիգոր , ասեն․ խնդրեմք զՂազար վարդապետն Ջահկեցի , և ոչ զայլ ոք․ գրեցին յայնժամ առ Ղազար վարդապետ 'ի Զմիւռնիա , զի եկեալ անտի երթիցէ 'ի Ս․ Էջմիածին․ (Օգոստոս 7) ։ Ի վաղիւն տօն Եփեսոսի Ս․ ժողովոյն , եկն հրաման խիստ յՆէկէն Մէհէմմէտ Փաշայէ առ Յովհաննէս Պատրիարք , պատուիրել յեկեղեցիս , զի մի՛ երգեսցեն զյետին երիս տունս Ով հրաշալի երգոյն , և նա առ ահին , այնպէս արար․ եւ եղեւ աղմուկ եւ խռովութիւն 'ի մէջ ժողովրդոց ։ Ոմանք 'ի Կեսարացւոց եառուն ասել յԻւսկիւտար զՃարականն զայն եւ մատնեցան 'ի Թի Արքունի նաւատեղեաց ոգիք 6 (Սեպտեմբեր 12) ։ Եպարքոսն Մէօհսին օղլու դարձաւ 'ի պատերազմէն դրօշիւք եւ երեւելի փառօք , և եմուտ 'ի մայրաքաղաքն և գնաց 'ի պալատն Արքայի․ եւ ապա ընկեցեալ 'ի պատուոյն տարագրեցաւ 'ի Թեսաղոնիկէ , եւ փոխանակ նորա ամբարձաւ յայն իշխանութիւն Գայմագամ , հակառակն քրիստոնէից (Յունվար 20) ։ Ամբաստանեցաւ Ղազար վարդապետ 'ի Դուռն 'ի Բդեշխէն Կարնոյ , իբր առանց հրովարտակի , և առաքեցաւ Նուիրակապետն Եպարքոսին ածել զնա 'ի Կոստանդինուպօլիս․ Թէպէտեւ Գրիգոր եւ Յովհաննէս բազում աշխատ եղեն դարձուցանել զնա յետս , այլ չեղեւ հնար ։ (Փետրվար 2) լուան թէ մեռեալ է Բդեշխն Կարնոյ , և Ղազար վարդապետ զերծեալ 'ի Ս․ Էջմիածին ։ (Մարտ 13) Ել արտաքս Թուղն կայսերական , և Վէզիրն մեծ գնաց 'ի պատերազմ ընդդէմ Աւստրիոյ ։ Յերկրորդ Կիւրակէի աղուհացից , խորհեցան Գրիգոր և Յովհաննէս ընդ գլխաւորս ազգին , եւ առաքեցին զոմանս առ դեսպանն Գաղղիոյ , լինել միջնորդ և ձեռնտու կարգադրութեան խնդրոյն Երուսաղէմի (1738, յ2 Ապրիլի) ։ Յետ կատարելոյ Գրիգորի զտօն Պասեքին յեկեղեցի Ս․ Գէորգայ , դարձաւ յԻւսկիւտար 'ի վանքն․ և մեծաւ ջանիւք գնեաց զերիս բաժինս այգւոյ տեղւոյն